

պաննեք մեր միւս գաւառներէն երկուքնեքն
բի հետ:

Հասարակական կեանքը միութեան խնդիր
մէջ է պարունակուիլ: Մենք պէտք է հե-
տաքրքրուինք ընդհանուր հայոց կեանքով և ծա-
նօթացնենք ամբողջ ազգը և մեր, հայ-կաթողիկ-
ներէն կեանքն հետ: Եւ ճշմարիտ, ինչի չը
գրենք, չը խօսենք մեր ժողովրդի բարոյական
կեանքն, նրա մտաւոր զարգացման խնդիրներն,
նրա տնտեսական, նրա կրթական վիճակն, նրա
փոխադարձ յարաբերութիւններն, կրթութեան
գործն, ուսումնարաններն վիճակն, կանանց կըր-
թութեան և ուրիշ հասարակական երևոյթներն
վրա, ինչպէս այդ անուամբ են և հայ-լուսաւոր-
չականները իրանց մասին:

Ի հարկէ կը գտնուին հակառակորդներ իմ այս
առաջարկութեան, բայց այդ շատ բնական է,
քանի որ ամեն նոր քայլը միշտ թշնամարար
է ընդունուիլով ամեն տեղ: Բայց ճշմարտութիւնը
միշտ յաղթող կը լինի վերջը և բարի աշխա-
տութիւնները կը պահպանեն ապագայ աշխու-
թեամբ:

Ազգային առաջադիմութիւնը իրական կը լի-
նի միայն այն ժամանակ, երբ ազգութեան բո-
լոր անդամներն կրթութիւնը հաւասարապէս ա-
ռաջ կը դնայ և այդ դէպքում մենք, հայ-կա-
թողիկներս հակառակութիւն ենք կազմում ընդ-
հանրութեան առաջադէմ ընթացքի մէջ: Մեր
անտարբերութիւնը կարող է խանգարել և դան-
դաղել ընդհանուր առաջադիմութեան գործը ժո-
ղովրդը, որ դեռ եւ խաւարի և տգիտութեան
մէջ է, նրա մէջ պէտք է զարգացնել ազգայնու-
թեան դադափարը և նա կը դիմէ ինքնաճանա-
չութեան գաղափարին: Այն ժամանակ նա կա-
րող կը լինի մտածելու իր ներկայի և բարոյա-
կան ապագայի մասին:

Ամենքս մեր կարողութեան չափ, ամեն մէկը
մեզանց մեր ընդունակութեան չափ պէտք է ծա-
ռայենք ընդհանրութեանը, համեմատաբար տանե-
լով այն քաղցր պարտականութիւնները, որոնք
վերաբերում են ընդհանրութեանը: «Մշակը» ազ-
գային իրաւոր է, նա կընդունի մեր բոլոր
աշխատութիւնները, որոնք պէտք է նպատակն
մեր ժողովրդի ապագայ մտաւոր, բարոյական և
տնտեսական զարգացմանն ու բարեկեցութեանը:

Այդ ճշմարտութեանը մէջ մենք համոզուեցինք
անցեալ տարվայ այդ լրագրի ընթացքից, որ
թէ և չէ կրում իր վերնագրի վրա ազգային
բառը, բայց աւելի ազգային է, քան թէ նրանք,
որոնք այդ անվանը իրենց անփականացնել են,
թէ և հակառակ են վարվում այդ վերնագրի դա-
դափարին: «Մշակը» անցեալ տարվայ ընթացքը
մեզ խրախուսում է աւելի էլ բաղձնապատկեալ
մեր ոյժերը ընդհանուր ծառայութեան համար:

Պետրոս Բէկուրեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«Новости» լրագրի հազորդում է որ ազգա-
յին լուսաւորութեան միջնորդութիւնը այլ ևս
արգելք չէ գտնում որ բոլոր համալսարանական
քաղաքներում հիմնուին իրական բարձրագոյն
կ ու լ ո ս ե Ր : Այդ կուրսերը կը հիմնուին այն
կանոնների ճիշդ հիման համեմատ, որոնք հրա-
տարակամ են եղել արդէն գոյութիւն ունեցող
իրական բարձրագոյն կուրսերի համար:

«Новости» լրագրի հազորդում է, որ բէալա-
կան զարգացման ուսումնասիրող աշակերտներն
վճարում է թոյլ տալ մասնէ համալսարանների
բնագիտական և մատենատնային ֆակուլտետ-
ները:

Ս. Պետրերուզից հեռագրում են «Русский
Курьер» լրագրին, որ ապագրական օրէնքներ
վերաբերող յանձնաժողովը կաւարի իր պա-
րագրութիւնները դաւան և այնուհետև նոր մշակ-
ված օրէնքը կը ներկայացվի պետական խորհրդի
քննութեանը, որ աշխատ ձեռք կը տայ այդ
օրէնքների վերջնական քննութեանն ու հաստա-
տութեանը:

Լեհական «Kurjer Codzienny» լրագրի հա-
զորդում է, որ Լեհաստանի մի քանի տեղերում
Ֆարբիկաների փակման պատճառով բանւորները
չըջում են առանց որ և է աշխատանք գտնել
կարողանալու: Լոյզիլի կողմը, օրինակ, բանւոր-
ները, զրկված լինելով օրական աշխատանքից,

թափառում են խմբերով, որոնք շատ անգամ
50 հոգուց են բաղկացած: Մուրացկանների
թիւը աւելանում է, իսկ Պետրոփովի կողմը, ինչ-
պէս լուրում է, մինչև անգամ աւագակներն երկու
խմբեր են կազմվել:

«Русский Курьер» լրագրի ֆէլետոնիստը
պատմում է թէ, ինչ ձեռք են պահում հաշա-
պահութեան գրքերը Ռուսաստանի երկաթուղի-
ների վարչութիւնների մէջ: Օրինակ մի երկա-
թուղու ել և մուտքի մատակարար մէջ յօդաւո-
ծաղիքը իր աչքերով էր տեսել յունիս ամառի
ծախար բաժնում հետեւել յօդուածը: «Ճանա-
պարհը ձիւնից իստակելու համար 600 ռուբլ»
Յօդուածագիրը հարցնել է թէ ինչպէս է պատա-
հել որ յունիս ամառի ձիւն էր եկել, կամ ձմեռ-
վանից մինչև յունիս ամառը չէր հալվել: Հաշա-
պահը և ինժեները հանգիստ կերպով պատաս-
խանել են որ դա մի ան և չա՛ն սխալ է: Եւ
այդ անշնչան սխալը, որ արժէ 600 ռուբլ, հա-
շիւը վերաքննողներից ոչ ոք չէր նկատել, ոչ
ինժեները, ոչ հաշապահը, ոչ գծի տեսուչը, ոչ
երկաթուղու կառավարիչը, ոչ դիրեկտորները,
ոչ ակցիոներներն ընդհանուր ժողովը, ոչ էլ
վերջապէս այդ ժողովից ընտրված վերաքննող
յանձնաժողովը: Ամենքը գտել են տարեկան
հաշիւը կանոնաւոր և հաշիւը հաստատուցաւ:

Բոլոր ուսուց լրագիրները մեծ գովառնելով
խօսում են Վուլնյի նկարչի վերջին պատկեր-
ների մասին: Վուլնյի պէյսաժներ (ընտելեան
տեսարաններ) է նկարում և գոյներն մի չեղած
ներդաշնակութեամբ մի մեծ դիւտ է արել: Նա
կարողանում է նկարել արեւակը, լուսինը և
խորժիկների մէջ երեւող ճրագները: Բայց, որ
տեսողը իր առջև ճշմարիտ լոյս է տեսնում: Նրա
նկարչութիւնները կարողորդ տպաւորութիւն
են անում տեսողի վրա: Վուլնյի, ասում են
դրմից է, բայց ինչ ազգութեան է պատկա-
նում.—այդ յիշված չէ նրա կենսագրութիւն-
ներից ոչ մինի մէջ: Ռուսաց «Художественный
журнал» ամսագրի մէջ, որ այս տարի հրա-
տարակվել սկսեց, մենք տեսանք Վուլնյի կեն-
դանագիրը: Նրա դէմքը հարաւային տիպին է
պատկանում:

ԱՄԱՆՅԱՆՈՒՄ մեզ գրում են: «Բաղաբային
բժիշկ չունենք, աղքատ հիւանդները մեռնում
են անխնամ, միջոց չունենալով վիճակի փո-
վաքել նախադեպական կամ վնասուածական բժշկին:
Գուման չէ մտածում իր հաշուով մի քաղաքա-
յին բժիշկ պահելու, որ ճիշտ բժիշկը չքաւոր
հիւանդներին և կարողութիւն անել որ տե-
ղիս ղեղապետը տար ղեղերը շքաւորներին ան-
վարձ»:

Մեզ գրում են Ախալցխայից հետեւալը: «Յա-
րութիւն Մութաֆեանցի 14 հազար ռուբլ յօ-
գուտ եկեղեցու շինութեան կտակելուց յետոյ
անցան վեց տարի: Բայց հարցնող չը կայ՝ ար-
դեօք եկեղեցին շինելու թէ մի այլ բարեգործա-
կան նպատակի գործածելու են այդ գումարը
հանգուցեալի որդիները, և երբ»:

ՄՕՁԳՕԿԻՑ մեզ գրում են: «Մեր կուրսի մա-
սին շատ խօսելը աւելորդ է. սրա ուղղութիւնը
նորն է, ինչ մեզանում եղած բոլոր կուրսերի:
Միայն մի բան, որ ուրիշ տեղ կաղմում է գտնէ
կուրսերի արժանաւորութիւնը, Մօղզիկի կը-
րուքը այդ էլ չունի. դա ընթերցարանն է: Թէ
կանայք և թէ տղամարդիկ նստում են երկու-
ները կանայք սեղանների մօտ և մինչև լոյսը
թափվի են խաղում: Վուրքը թղթախաղի տուն
է, ուրիշ ոչինչ: Բացի սրանից մի շատ վեա-
ռակար սովորութիւն է մտել մեր հասարակու-
թեան մէջ, դա կուրսի մէջ մ'ան կ'ա'ն'ա'ն'
պ'ար'ա'հ'ա'ն'դ'է'ս'ն'է'ր'ի' անդադար սարքելն
է: Որքան այդ տեսակ մանկական խնձոյքները
վնասակար են թէ մանկավարժական, թէ բա-
րոյական և թէ առողջապահական կէտից,—այդ
կարող է հակակաւալ ամեն մի փոքր ի շատ
առողջամտ մարդ: Բայց Մօղզիկի հասարակու-
թեանը այդ ճշմարտութիւնը դեռ չէ հասկացել:
Նրանք չեն հասկանում, որ երեխաները պէտք
է վաղ պառկեն և ոչ թէ միայն բալում մինչև
լոյսը, չեն հասկանում որ պարահանդէսը սո-
վորեցնում է մանուկներին պճնասիրութեանն ու
զարգարանքներին, չեն հասկանում որ երեխայի
առողջութեանը վնաս է դաժիճի խնդրված օդը,

որ յողնեցնող պարը այդ տեսակ խնդրված օդի
մէջ սպանի: Ներգործութիւն ունի մանուկի ա-
ռողջութեան վրա, որ բարոյական կէտից էլ
դա կը նշանակէ փչացնել մանուկներին, որով-
հետև մանկահասակ պարողներին չըջապատում
են թ ա մ ա շ ա անող հասակ առաձները, որոնց
բերանից անտեղի ծիծաղ, ծաղր, համար, կամ
անզգոյշ գովասանք մանուկներին վերաբերու-
թեամբ նրանց կամ ինքնասիրութիւնը վիրաւո-
րում են, կամ փառասիրութիւնը զրգուում: Լաւ
կանէին մօղզիկցիք, փոխանակ մանկական պա-
րահանդէսներ սարքելու, մ ա Ր մ Ն ա մ ա Ր գ ու-
թ իւ Ն սովորեցնէին երեխաներին»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԳԵՐՄԱՆԻԱ

Բերլինից լրագիրներին հաղորդում են
հետեւեալ տեղեկութիւնները: Վ. Պօլսից
Բերլին եկած է արդէն յետ դարձած ան-
գլիական դեսպան Գօշեն մի քանի անգամ
խորհրդակցեց իշխան Բիսմարկի հետ, ըն-
դունակեցաւ կայսրից և թագաժառանգից:
Բերլինը չափազանց հպարտանում է այդ
այցելութեամբ, ասելով, որ այդ հանգա-
մանը ապացուցանում է, որ ամենքը մեծ
նշանակութիւն են տալիս Գերմանիայի ազ-
գեցութեանը: Անգլիան, որ նորերում կար-
ծում էր, թէ ինքը կարող է զեկափարել
արեւելեան գործերը, իր դեսպանին Բերլին
ուղարկելով խոստովանում է, որ ինքը եր-
կրորդական ոյժ է կազմում և ցանկանում
է բարեկամական յարաբերութիւններ ունե-
նալ Գերմանիայի հետ: Բացի այդ Անգլիան
մինչ այն աստիճան հաղորդում է Գերմանիայի
առաջնակարգ դիրքի հետ, որ դեսպա-
նի բերանով առաջարկում է նրան ղեկա-
վարել յոյն-թիւրքական բանակցութիւնները
և որ Գերմանիայի դեսպանը Վ. Պօլսի մէջ
նախագահէ դեսպանների խորհուրդների
ժամանակ: Այդ բոլորը չափազանց շողո-
քորթում է Գերմանացիների ազգային ինք-
նասիրութեանը:

Գօշենի գործի աջողութեան մասին դա-
նացան յուրեր են տարածված: Մի քանիսը
ասում են, որ նրա առաջարկութիւնը լաւ
ընդունելութիւն գտաւ, միւսները հակա-
ռակ են պատմում: Ասում են, որ իշխան
Բիսմարկ մեծ ուշադրութեամբ լսում էր տե-
ղեկութիւնները անգլիական կառավարու-
թեան կարծիքների, ցանկութիւնների և
դիտաւորութիւնների մասին և յայտնեց, որ
իր կողմից դրանց դէմ ոչինչ ասելիք չունի
և մասամբ բաժանում է այդ հայեացքնե-
րը: Այսպէս թէ այնպէս այդ լուրերից
երևում է, որ անգլիական և Գերմանական
կառավարութիւնների մէջ համաձայնու-
թիւն է կայացել:

Խ Ա Ռ Ն Լ ՈՒՐ Ե Ր

Հարիւր տարի սրանից առաջ դեռ անհարկն
էր Գերմանիայում ապրել գրական աշխատա-
նով: Լեւոնից ազգաստութեան մէջ էր ապրում
նրա ամենաերեւելի գրածները միջոց չէին տա-
լիս նրան փոքր ի շատէ վայելուչ կերպով իր
կեանքը ապահովացնելու: Նա այնքան չքաւոր
էր, որ երկար ժամանակ սաստիկ սիրահարված
լինելով մի աղքատ վրա, ստիպված էր շատ
տարիներ ապաստել, որ նիւթական քիչ թէ շատ
միջոցներ ունենայ պահպնելու իր սիրածի հետ:
Նիւթական միջոցների պահպանութեան պատճա-
ռով նա իր ամբողջ կեանքը չը կարողացաւ իր
բաղձանքը կատարել, այն է ճանապարհորդել
Եւրոպա և Հուստ տեսնել: Լեւոնից պատասխա-
նելով իր եղբոր, որ ցանկութիւն էր յայտնել
նորնպէս նուիրել իրան գրական ապարկից,
գրում էր նրան մի նամակ մէջ: «Ես թեղ խոր-
հուրդ չեմ տալիս նուիրել թեղ գրական աշխա-
տանքին. այդ ապարկը մեղանում շատ դառն
և փշուտ է, չիղիմալ մեր հայրենիքում օրական
հացի կարօտ մարդ է և եթէ ես այդքան հաս-
կում չը լինեի, այդքան հեռու չէի գնացել գրու-
կան ապարկի մէջ, ես ինքս էլ ուրախու-
թեամբ կը փոխել այժմ իմ ապարկը: Ան-
ինչ գրութեան մէջ էր Գերմանիան հարիւր տարի
նորն Գերմանիան, որ հացի կարօտ էր թողնում
իր երեւելի մասնողին և բանաստեղծին, երբ նա

այլ ևս պէտք չունէր մարդկանց ճշմարտեան
մէջ, այլ և այլ քաղաքներում արձաններ կանդ-
նեցրեց նրա յիշատակին:

Երեւելի Շիլլերի կենսագրութիւն գրողները
պատմում են, որ երբ որ Երեւելի գերմանացի
բանաստեղծը և պատմաբանը վերջացրեց իր
«Երեւնամեայ պատերազմի» պատմութիւնը և
ներկայացրեց այդ իր աշխատանքը աւստրիական
կայսրին, նա որպէս վարձ իր բաղձամեայ գե-
ղեցիկ աշխատանքի համար ստացաւ. կայս-
րի ձեռքից մի գումար, որ մեր այժմեան
փողով կանի մօտաւորապէս 50 ռուբլ: Այսպէս
էին վարձատրվում մի ժամանակ երեւելի գրող-
ների աշխատութիւնները: Միայն Գեօթի նիւ-
թապէս լաւ գրութեան մէջ էր, որովհետև ինքն
հարուստ մարդ էր և բարձր պաշտօններ էր
հասել Վէյմարի դքսութեան պետական ծառա-
յութեան մէջ:

«La Justice» լրագրում կարդում ենք որ
Սլաւոնիան չուտով կը տօնի իր նշանաւոր բա-
նաստեղծ կաղեթօն-դը-լա-բարկայի երկուհա-
րուամեակը: Այս առիթով Մարիլի գիտու-
թեանց ակադեմիան նշանակել է բանաստեղծու-
թեան միջազգային մրցութիւն և տնօրոնարու-
թեան օրը կը կատարվին զանազան թատրոնա-
կան ներկայացումներ և ասպետական խաղեր,
իսկ սպանիական բոլոր լրագիրները կը հրա-
տարակեն բանաստեղծի կենսագրութիւնը և
քաղաքացիները նրա հեղինակութիւններից, մա-
նուսանդ նրա «Կեանքը երազ է» նշանաւոր
գրութեանը:

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՒՆՑ

Ս. ՊԵՏԵՐՔՈՒՐԳ, 13 փետրվարի: «Голосъ»
լրագիրը հաղորդում է, որ երէկ փետրվարի
12-ին խաղաղական դաշնադիր Ռուսաս-
տանի և ջինաստանի մէջ ստորագրեցաւ
այդ երկու պետութիւնների հաւատարմա-
տարներէից: Մարկիզ Զգենգ օրերում կու-
ղեարվի փարեք:

Ս. ՊԵՏԵՐՔՈՒՐԳ, 13 փետրվարի: Պետական
բանկի 5% տոմսակը առաջին շրջանի ար-
ժէ 95 ռ. 75 փ., երկրորդ 93 ռ. 37 փ.,
երրորդ 93 ռ. 50 փ., չորրորդ 93 ռ. 25 փ.,
ներքին 5% առաջին փոխառութեան տոմ-
սակը արժէ 225 ռ. 25 փ., երկրորդ 223
ռ., արեւելեան առաջին փոխառութեան
տոմսակը 92 ռ. 37 փ., երկրորդ 92 ռ. 37
փ., երրորդ 92 ռ. 25 փ., ասի 7 ռ. 82 փ.:
Ռուսաց 1 ռ. լծութի վրա արժէ 25,09
պէս, Ամստերդամի վրա 127,25 պէս,
ռուսաց 100 ռ. Համբուրգի վրա 214 1/2
մարկ, փարիզի վրա 265 ֆրանկ 75 սան-
տիմ: Բօրսայի արամադրութիւնը թոյլ է:

Ս. ՊԵՏԵՐՔՈՒՐԳ, 14 փետրվարի: Բար-
ձրագոյն հրամանով թոյլ է արված Գրոտին
փարկ ներքին գործերի միւնիստրի իրա-
ւունքները որպէս բանտերի վրա հոգա-
բարձութեան ընկերութեան նախագահ,
նորնպէս առաջնորդել բանտային փարու-
թեանը և մասնակցել պետական բարձրա-
գոյն հաստատութիւնների և սենատի խոր-
հուրդների մէջ: Առհասարակ նրան թոյլ է
արված փոխարինել ներքին գործերի միւնի-
ստրին բանտային գործերի վարելու մէջ և
ունենալ յարաբերութիւններ այլ և այլ
հաստատութիւնների հետ: Այսօր մարկիզ
Զգենգ ճանապարհ ընկաւ դէպի արտասահ-
ման իր երկու քարտուղարների և տան և
րեք պաշտօնեաների ուղեկցութեամբ: Այ-
սօր հասաւ այստեղ Վիլլիգ զինեալ Վրէն-
տէին:

Ս. ՊԵՏԵՐՔՈՒՐԳ, 15 փետրվարի: «Գօլոս»
լրագիրը հաղորդում է որ չինական դես-
պանութեան առաջին քարտուղարը այս օ-
րերս թողնելու է Ս. Պետերբուրգ, ուղեոր-
վելով դէպի Պէկին և տանելով իր հետ նա-
րկումն ստորագրված դաշնադիրը: Այն լը-
գիրը ասում է որ մեր տերութեան համա-
ձայնվելը չինական տէրութեան հետ կա-
տարվեցաւ ջինաստանին մեր կողմից հե-
տեւեայ գիծաձեւերի պայմանով, զիջված են
Կուլչայի երկրը, Գարիդան, Տէկէսը հիւս-
ջինեան անցըրելով, որոնք տանում են դէպի
առաջարկաւ և դէպի Ալկու քաղաքը: Զիջ-
ված երկրները ամենաբերրի տեղերն են
Միջին-Ասիայի մէջ և մեր ամենամուր
գիրքերն էին:

Խմբագիր—հրատարակող ԳԻՐԳՈՐ ԱՐՄԵՐԻՆԻ

Յ Ե Յ Տ Ե Ր Ե Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

Ն Ո Ր Տ Պ Ե Ր Ե Ն

Մ Ո Վ Ս Է Ս Վ Լ Ե Ր Ե Ն Ե Ն Յ Ե Ի Ը Ն Կ

Գ Ս Ե Ն Ո Վ Ս Կ Ս Յ Ս Փ Ո Ղ Ո Յ, առանձին Ի Շ Ի Բ Ե Զ Բ Ո Ւ Թ Ո Վ Ի

Այս օրերս բանալով ԹԻՖԼԻՉՈՒՄ լիակատար ՏՊԱՐԱՆ իւր ամեն պարագայիւք, ընդունում եմ տպելու ԱՄԵՆ ԼԵՋՈՒՈՎ և ամեն տեսակ պատուէրներ, այն է՝ ԳՐԻՔԵՐ, ԻՐԱԳՐԵՐ, ԱՄՍՍԳՐԵՐ, ԲԼԱՆԿՆԵՐ, ՀԱՇՈՒԵՑՈՒՑԱԿՆԵՐ, ՀԱՇՈՒԻ ՏԵՏՐԱԿՆԵՐ, ՏՈՄԱԿՆԵՐ, ՉԱՅԻ ԵՒ ԾԻԱԽՈՏԻ ԵԱՌԼԻԿՆԵՐ (զանազան գոյներ) և այլն:

Տպագրութեան մանրութեանը և տպարանական կանոնների ճշտութեանը համար ԻԲՐԵՒԻ ՄԱՍՆԱԳԻՏ պատասխանատու եմ լինում միշտ: ՊԱՏՈՒԵՐՆԵՐԸ կը կատարուին ԿԱՐՃ ՄԻՋՈՑՈՒՄ, ԱՄԵՆԱՄԱՏՁԵԼԻ ԳՆԵՐՈՎ:

3—5 (2)

Հ ր ա տ ա ր ա կ ու թ ի լ ը ն

Կ Ո Վ Կ Ս Ս Գ Ր Ա Վ Ա Ճ Ա Ռ Ա Ն Ո Յ Ի

Օ. Գրիգորեանցի.

Դուրս եկան մամուլի տակից

1. Գ Ր Ի Գ Ր Ե Ա Ն Գ Զ.—Մարդակազմութեան տարրական դասեր 18 պատկերներով դպրոցների համար, աշխատ. Զ. Գրիգորեանց, գինն է . . . 50 Կ.
2. Ղ Ո Լ Կ Ա Ս Ե Ա Ն Գ Հ.—Դասագիրք ընթերցանութեան, գինն է . . . 40 Կ.
3. Ս Ի Մ Է Օ Ն Ե Ա Ն Գ Ն.—Աշխարհագրութեան ձեռնարկ Գ. Հ. Գ. . . 60 Կ.

Մամուլի տակ ընկան

1. Ծերենցի—«Թեոդորոս Ուշտունի»:
2. Գամառ-Քաթիբյանի—Մանկական ոտանավորներ և երգեր:

11—12

Ինչ է ՊԱՏՃԱՌԸ ՈՐ ԱՆԳԼԻԱԿԱՆ ՄԱԳԱՋԻՆԸ ծախում է այժմ այնքան մեծ քանակութեամբ թէյ և այլ ապրանքներ: Որովհետև այդ մագաղինը ստանում է թէյ ուղղակի պլանտատորներից, առնում է բոլոր ապրանքները ուղղակի գործարաններից և բաւականաչափ 50,000 ֆունտ թէյ առաջին տեսակի, կակաո և չոկոլադ-ֆրայ, մուրաբա և կոնֆէկաններ 25% աւելի է քան թէյ ամեն տեղ, անկողիններ, հրացաններ, բեկովներ, կողպէքներ, մատուցարաններ, ամաններ, դանակներ, գզերներ, թէյամաններ, բաժակներ, թամբեր, գուլպաներ կանանց և տղամարդկանց, թաշկինակներ, մակինտոշներ, կարկնիք, թուղթ, մատիտներ, տետրակներ, գրիչներ ամեն ձևով համար և այլն, 20 մինչև 40% աւելի է քան քան թէյ ուրիշ տեղ: Արժուոնու գալլէրէում:

100—53

ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԱՄԵՆԱՄԵԾՔԱՆԱԿՈՒԹԻՒՆԸ ամբողջ կողմաւոր մէջ գտնւում է այն ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ ՄԵՋ ԱՐԾՐՈՒՆՈՒ ԳԱՅԵՐԵՐԸ: Տպագրութեան, հաշուարկների, ԱՄԱՆՆԵՐԻ, մուրաբաների, ՄԱՋՈՒԳԻ, արիկի, և այլն 500,000 ԿՈՂՊԵՔՆԵՐ, ՄԱՏՈՒՑԱՐԱՆՆԵՐ, ԳՐԻՋՆԵՐ 30% է քան քան թէյ մի ուրիշ տեղ:

9—10

Մ Ե Տ Ա Լ Ե Ղ Ե Ն

Ի Բ Ե Ղ Ե Ն Ն Ե Ր Ի

Մ Ա Գ Ա Ջ Ի Ն Ե Վ Ա Ճ Ա Ռ Ո Ւ Մ Ն

Դիտաւորութիւն ունենալով վերջացնելու առևտուրս, կամենում եմ ՎԱՃԱՌԵԼ ԻՄ ՄԵՏԱԼԵՂԵՆ ԻՐԵՐԻ ՄԱԳԱՋԻՆԸ, որը ևս բացառւում ունի թիֆլիսի մէջ սորանից 18 տարի առաջ իրեղենների պահեստի, զնահատութիւնը, որը բաղկանում է Զրահայի, Անգլիայի և այլ իրեղեններից, համարում է 60-ից մինչ 70 հազար բոլորի: Մագաղինը գնել ցանկացողներին խնդրում դիմել ուղղակի ինձ մօտ Թիֆլիսում Պաշկինսկայա Ճ 13, (նախկին Երևանսկի պողոտա):

ԼԻԻԳՎԻԳ ՎԻԼԳԵԼՄՈՎԻՉ ՄԵԼՄԱՆ:

3—3 (2)

Մեծ քանակութեամբ ԹԵՅ առաջին տեսակի ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ ՄԵՋ 25% ԼԱԻ և ԷԺԱՆ է Մօսկվայի փաճառականների թէյից: Նշն տեղը կան 50,000 ԿՈՂՊԵՔՆԵՐ և ՊԱՐՆՈՍՆԵՐ ուրիշ տեղերից 30% է քան: Ծախում են ՉՄԵՆՆԱՅԻՆ ՀԱԳՈՒՍՏՆԵՐ, պալատներ, ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ԳԻՆԻՆԵՐ և այլն:

10—10

ՀԵՄՈՐՈՒԴԵԿԱՆ ԲՈՒՍԵԿԱՆ ՀԵՂԵՆԻԹ փորձված և առաջարկված պրոֆեսոր բժշկի ԿՐԵՏԿՈՎ ՍԿՈՒՅ շատ գեղեցիկ միջոց է ՍՏԵՄՈՒՐՈՒ ՕՆՆԵՐՆԵՐ ՑՆԻՆԻ ԴԵՄ, մաքրում է և շատացնում է ԵՐԻՒՆԸ, վերականգնում է ՄԵՐՄԵՒ քնդհանուր հարմոնեան, մանաւանդ առաջարկվում է Հիմնորի և Իպախանդրիա ՀԻԼՆԵԳՈՒԹԵԼՆ ԴԵՄ: Մի շէր, գործածելու ԽՐԵՏԵՆԵՐՈՎ 1 ր. 80 Կ.: Օտարաբաղաբացիք ուղարկում են ՓՕՍՏԻ ծախար: Ծախում է Ռուսաստանի ԲՈՂՈՐ ԴԵՂԱՏԵՆՆԵՐԻ մէջ և զեղերի պահեստների մէջ: Պահեստը Մօսկվայում է, Ն. Մատենսէյնի մօտ, Տիբրսկայա փողոց: Կիշնէովի մէջ Կայուշանսկու և Բրայունշտէյնի մօտ: Վարչակայի մէջ Ա. Փ. Գալլէի մօտ: 17—25 (5)

Վերականգնող ՄԱԿ-ՄԱՍՏԵՐ, մազերը ամրացնող և նրանց ԲԵՐԱԿԱՆ ԳՈՅՆԸ վերադարձնող: Գինը 2 ր. շէր, ՓՈՍՏԱՅՈՎ ուղարկված 2 ր. 49 Կոպ.: ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ մէջ:



Մի և նոյն տեղը ԽԻՆԱՅԻԻՂ, մազերը ամրացնող համար, 1 ր. ամանը և վրձին գլխացալի դէմ, ՏՈՒԱԼԵՏԻ ՍԱՊՈՆ և հոտաւէտ ջրեր և այլն: 24—100

2ր նախկին մաքրի աւելանալուն ապրանքները առաջիկայ գնելով կը ծախվին ԿՐԵՂՈՒԹԵՅ 1 ր. 5 Կ. և 1 ր. 10 Կոպ., շատ լաւ ՄՈՒՆԵԳ 1 ր. 20 Կ. և 1 ր. 40 Կ., հիմնալի ԿԱՅՍԱՌԻ 1 ր. 60 Կ. և 1 ր. 80 Կ. և ԱՄԵՆԱԼԱԻ ԹԵՅ 2 ր. առանց թղթի: Անգլիական թէյովները 4 ր.—40 ր. հրացաններ 20 ր.—200 ր. Անգլիական խանութի մէջ: Գործարկողներն ԲԱՐՆԱԲԻԻ ԹԱՄԲԵՐԸ, Զոնսոնի ԿՈՂՊԵՔՆԵՐԸ, Տոբոլսկի ԳՐԻՋՆԵՐԸ և Կլարալի կակաո-չոկոլադի ծախելու համար, որոնք վարկի հանդիս ժամանակ ունեն մեզայ ստացան: ՀՈՏԱԼԵՏ ԹԵՅԻ ՖՈՒՆԵՏ ՊԱՏՈՒԱԿԱՆ ԹԵՅՄԱՍՆԸՈՎ 1 ր. 65 Կ. և ամենալաւը 2 ր. 30 Կ.: Վաճառականներին օգտուէա է մեծ քանակութեամբ ապրանքներ առնել Անգլիական խանութի մէջ: Ամբողջ հազուստ 15 ր., կոնֆէկաններ հազի դէմ 60 Կ. ֆունտը: 23—100

ՍԱԼԻՑԵԼԵՆ ԵՏԵՄ ԲԺՇԿԵԼՈՒ ՄԻՋՈՑՆԵՐ ԵՏԵՄՆԵՐՈՅԺ ԲԺՇԿԵԼԻ ԷՆԻՆԻ ՀԵՅԻՄԻ Թոյլ են տուած Մօսկվայի ԲԺՇԿԵԼԵՆ ՓԵԿՈՒԼՏԵՏԻՑ: Եյդ միջոցները մեծ ԳՈՐԾԵԳՐՈՒԹԻՒՆ ԵՆ ԴՈՒՆԵԼ և առաջարկվում են իբրեւ ԵՄԵՆԱԼԱԻ առողջապահական ՄԻՋՈՑՆԵՐ բերանի և առամների համար: Կարելի է ԵՏԵՄՆԵՐԸ պահպանել ՓՈՇԻՆԵԼՈՒՑ, սառեցնում են ԼՕՐՉՈՒՆԵՐԻ ԲԵՐԸ և վատ ՀՈՏԻ առաջն են առնում: Եամանարոյժ բժիշկ Ե. Ե. Եղեշէյով ԳԼԽԵԼՈՐ ՊԵՆՍԵՐ գտնվում է ՄՕՍԿՎԱՅՈՒՄ, ԿՈՒՆԵՆՑԿԻ ԿԵՄՈՒՐԸ, ՍՕԿՈԼՈՎԻ տանը: ԹԻՖԼԻՍԻՄ կարելի է գտնել Ե. Մ. ՑՈՒՐԵՆՈՎԻ ԿՈՎԱԿԱՆՆԵՆ և անդրկովկասեան գլխաւոր ՊԵՆՍԵՐՈՒՄ: Ծախողների ՆՇԱՆՆԵՐՈՐ ՕԻՋՈՒՄՆ ԿԸ ԼԻՆԻ: 1—30 (11)

Ա Ն Գ Լ Ի Ա Կ Ա Ն Մ Ա Գ Ա Ջ Ի Ն Ո Ւ Մ			
Համեմատեցէք թէյի ֆունտը	1 ր. 5 Կ.	Մօսկվայից բերվող թէյի հետ	Ֆ. 1 ր. 30 Կ.
—	1 ր. 10 Կ.	—	Ֆ. 1 ր. 40 Կ.
—	1 ր. 20 Կ.	—	Ֆ. 1 ր. 60 Կ.
—	1 ր. 40 Կ.	—	Ֆ. 1 ր. 80 Կ.
—	1 ր. 60 Կ.	—	Ֆ. 2 ր. —
—	1 ր. 80 Կ.	—	Ֆ. 2 ր. 50 Կ.
Ամենալաւը	2 ր. —	—	Ֆ. 3 ր. —
43—100			

Մինչև այժմ չեղած ԵԿԵՆՋԻ ԻԻՂ ԲԺՇԿԵԼՈՒՄ, որ կատարելագործված է բժիշկ ՄԵԼՎԻԻ ԿԻԻ ԴԵՅՉԻՑ: Եռողջացնում է ամեն տեսակ թոփ-ԼՈՒԹԻՒՆ, եթէ նա բնական է: ԵՐԵՐ ԲՈՒՐԻ, ըստանալուց յետոյ ուղարկվում է ՄԻՇՇ, այդ իւղից, մանրամասն ԽՐԵՏԵՆԵՐՈՎ, գործածութ մն մասին: Եյդ իւղը կարելի է ստանալ Պետերբուրգի բոլոր ԴԵՂԱՏՈՒՆՆԵՐԻՑ և Ելէքսանդր ՎԵՆՑԵԼԻՑ, Կաղանսկայա փողոց № 3: 24—51

VICHY

Складъ въ ПАРИЖѢ, 22, бульваръ Монтмартръ.

PASTILLES DIGESTIVES, приготовленные въ Виши изъ соли, добываемой изъ особенныхъ источниковъ, весьма приятны на вкусъ и хорошо дѣйствуютъ противъ тошноты и труднаго пищеварения.

SELS DE VICHY POUR BAINS. Одни свертки для ванны лицамъ, не могущимъ лечиться въ Виши.

Во избѣжаніе поддѣлки, требовать на всѣхъ марку Компани.

Թիֆլիսում Ցուրինովի մօտ:

VICHY

PARIS, 22, boulevard Montmartre. GRANDE-GRILLE. Отъ лимфатическаго расположения, дурнаго пищеварения, засорения печени и селезенки, зашла, каменной болѣзни и проч.

HOPITAL. Отъ труднаго пищеварения, тяжести желудка, потери аппетита, боли въ желудкѣ.

CELESTINS. Отъ боли въ поясницѣ, мочевого пузыря, каменной болѣзни, подагры, потери аппетита.

HAUTERIVE. Отъ боли въ поясницѣ, мочевого пузыря, каменной болѣзни, подагры, потери аппетита.

TREBOBAT. название источника на корбѣхъ.

Թիֆլիսում Ցուրինովի մօտ: